ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամբիոնների գործունեության մշտադիտարկման արդյունքների մասին

24.05.2022թ.

ԱԲՀ ռեկտորի՝ 27.12.2021 թ.-ի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովը 20.01.2021-27.02.2021 ժամանակահատվածում իրականացրել է համալսարանի 6 ամբիոնների 2019-2020, 2020-2021 ուստարվա և 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության մշտադիտարկում: Ամբիոններին նախապես տրամադրվել էր ԱԲՀ գիտ-խորհրդի կողմից հաստատված «Ամբիոնի 3 տարվա գործունեության մշտադիտարկման ընթացակարգը», որի հիման վրա էլ ուսումնասիրվել են ամբիոնների փաստաթղթերը և կատարած աշխատանքները: Հանձնաժողովի անդամներն ի մի են բերել հավաքագրված տեղեկատվությունը և տրամադրել ՈԱ մասնագետին, որն էլ ամբողջացրել և վերլուծել է այն: Հանձնաժողովի անդամների կողմից կատարվել են համապատասխան հետևություններ, ներկայացվել բարելավման առաջարկներ, որոնք քննարկվել են հանձնաժողովի անդամների կողմից:

Ներկայացնենք ամբիոնների մշտադիտարկման արդյունքները:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

/ամբիոնի վարիչ՝ Հ. Ջավրուշյան/

1. Ամբիոնի կազմի մասին

	Ուստարի	Դասախոսների թիվը	Ուսումնաօժանդակ կազմ	Գիտ. աստիճան	Գիտ. կոչում	Միջին տարիքը
1.	2019-2020	11	1	7	4	44
2.	2020-2021	10	1	6	3	46
3.	2021-2022	10	1	5	3	44

Բնագիտական առարկաների ամբիոնում դասավանդվող դասախոսների որակավորումը համապատասխանում է պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական պահանջներին: 2021-2022 ուստարում գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թիվը մեկով նվազել է՝ 2020-2021 ուստարվա համեմատ, իսկ 2019-2020 ուստարվա համեմատ՝ 2-ով:

2. Ամբիոնի կառավարում չափանիշով պահանջվող փաստաթղթերն առկա են ամբիոնում: Ամբիոնը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ համալսարանի առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և հաշվետվողականության մեխանիզմներ, սակայն

պլանավորման և պլանների իրականացման արդյունավետության վերլուծություն, մշտադիտարկում չի իրականացրել:

3. Ուսումնական գործընթաց և որակի ապահովում չափանիշում ուշադրության են արժանացել հետևյալ հարցերը՝

- Ամբիոնն ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը/առարկայական ծրագրերը:
- Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման նպատակով անցկացվել են մի շարք դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից:
- Ուսանողների առաջադիմությունը ցածր է հիմնականում «Դեղաբանություն» առարկայից: Այս հարցը քննարկվել է ամբիոնում, նախատեսվում են լրացուցիչ դասալսումներ:
- Բաց դասեր վերջին 3 տարվա ընթացքում չեն անցկացվել, առկա չէր նաև օրացուցային պլան տարվա ընթացքում պլանավորվող բաց դասերի վերաբերյալ:
- Ուսանողների կարիքների վերհանման շուրջ աշխատանքներ տարվում են ոչ ֆորմալ ձևով (հիմնականում հերթապահ դասախոսների կողմից) հիմնականում սոց. ցանցերի միջոցով՝ հետադարձ կապի ապահովմամբ: Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մասին տեղեկատվությունը սակավ է:

4.Գիտահետազոտական աշխատանքներ չափանիշում բացակայում են ամբիոնի և ՈւԳԸ-ի հետ տարվող աշխատանքները, ՀՀ այլ բուհերի ամբիոնների հետ ստեղծագործական կապը, ինչպես նաև ամբիոնի պլանի համաձայն գիտահետազոտական ոչ բավարար աշխատանքներ են տարվել:

5. Մեթոդական և հասարակական աշխատանքներ չափանիշում ամբողջական չէ ամբիոնում դասավանդվող առարկաների դասախոսությունների էլ. ֆոնդը, պարզ չէ դրանց հասանելիությունն ուսանողներին: 2021 թ. ամբիոնի վարիչը՝ կ.գ.թ. Հայարփի Ջավրուշյանը, կազմել և հրատարակել է «Կենսաքիմիայի լաբորատոր ձեռնարկ»:

Ամբիոնի աշխատակիցների կողմից կարծիքներ, գրախոսություններ չեն տրվել դիտարկվող ժամանակահատվածում, դասախոսներն առայժմ ընդգրկված չեն տարբեր հասարակական կազմակերպություններում:

Ամբիոնի կողմից բարձրացված խնդիրը հետևյալն է՝

1. Վերանայել ամբիոնի վարչական աշխատակիցների աշխատավարձերը:
2. «Բժշկական ինֆորմատիկա» առարկայի դասավանդման համար տրամադրել առնվազն 15 համակարգիչներով լսարան:

Հանձնաժողովն առաջարկում է՝

1. Ապահովել իրազեկվածություն գործող կանոնակարգերի վերաբերյալ՝ դասախոսների շրջանում:

2. Ուշադրություն դարձնել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների կատարմանը:
3. Ակտիվացնել ՈՒԳԸ-ի և ամբիոնների հետ համագործակցությունը:
4. Ուշադրություն դարձնել ամբիոնին կից լաբորատորիայի պայմաններին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

/ամբիոնի վարիչ՝ Ա. Օվչյան/

1.Ամբիոնի կազմը

	Ուստարի	Դասախոսների թիվը	Ուսումնաօժանդակ կազմ	Գիտ. աստիճան	Գիտ. կոչում	Միջին տարիքը
1.	2019-2020	11	-	5	1	36
2.	2020-2021	9	-	2	-	32
3.	2021-2022	10	-	1	-	36

Ամբիոնը հաշվետու տարում ունեցել է իր առջև դրված նպատակներն ու խնդիրներն իրականացնող պրոֆեսորադասախոսական կազմ, սակայն ուսումնաօժանդակ անձնակազմ չի ունեցել, որի հետևանքով ամբիոնի վարիչի աշխատանքային ծանրաբեռնվածությունը մեծացել է:

Սոցիալական բժշկության առարկաների ամբիոնում ըստ տարիների ոչ թե ավելացել է գիտությունների թեկնածուների, գիտական կոչում ունեցող դասախոսների թիվը, այլ նվազել: Գուցե խնդիրն այն է, որ ամբիոնը համալրված է երիտասարդ դասախոսներով, ինչևէ գիտական գործունեությունը ամբիոնում շատ պասիվ է:

2. Ամբիոնի կառավարում չափանիշում պահանջվող բոլոր փաստաթղթերն առկա են ամբիոնում: Ամբիոնը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ համալսարանի ռազմավարական ծրագրին համապատասխան, ունի դրանց իրականացման և հաշվետվողականության մեխանիզմներ, սակայն պլանավորման և պլանների իրականացման արդյունավետության վերլուծություն, մշտադիտարկում չի իրականացրել:

3. Ուսումնական գործընթաց և որակի ապահովում չափանիշում՝

- Ամբիոնն ունի դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը/առարկայական ծրագրերը:
- Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման նպատակով անցկացվել են մի շարք դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից: Ամբիոնի նիստերում քննարկվել են դասալսման արդյունքները, սակայն խորքային վերլուծություններ չեն արվել, երբևէ չեն լսվել գիտխորհրդում:
- Դասախոսությունների էլեկտրոնային ֆոնդը համալրման, ամբողջացման կարիք ունի:

- Խորհրդատվությունների համար նախատեսված հերթապահության գրաֆիկը առկա էր, սակայն տրամադրված խորհրդատվությունների մասին գրանցումները սակավ էին:

4.Գիտահետազոտական աշխատանքներ չափանիշում, ցավոք, ամբիոնը դիտարկվող ժամանակահատվածում անհրաժեշտ աշխատանքներ չի իրականացրել:

5. Մեթոդական և հասարակական աշխատանքներ չափանիշում ևս անհրաժեշտ քայլեր չեն իրականացվել:

Ամբիոնի կողմից բարձրացված խնդիր՝

1. Ամբիոնի նյութատեխնիկական բազայի համալրում:
2. Ամբիոնի համալրում ուսումնական աշխատանքների գծով պատասխանատուի հաստիքով:

Հանձնաժողովն առաջարկում է՝

1. Ապահովել դասախոսների շրջանում իրազեկվածություն ԱԲՀ ԳԽ կողմից հաստատված կանոնակարգերի վերաբերյալ:
2. Ապահովել ԳԽ որոշումների պատճենների տրամադրումը ամբիոնին:
3. Մեծ ուշադրություն դարձնել համալսարանում գիտահետազոտական աշխատանք-ների կատարմանը:

ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

/ամբիոնի վարիչ՝ Ն.Հունանյան/

1. Ամբիոնի կազմը

	Ուստարի	Դասախոսների թիվը	Ուսումնաօժանդակ կազմ	Գիտ. աստիճան	Գիտ. կոչում	Միջին տարիքը
1.	2019-2020	11	1	7	4	40
2.	2020-2021	12	1	8	4	41
3.	2021-2022	11	1	6	3	42

Ամբիոնն ունի ՄԿԾ-ների իրականացման համար համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմ: Գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը 2021-2022 ուստարում նախորդի համեմատ նվազել է 2-ով:

2.Ամբիոնի կառավարում չափանիշում պահանջվող բոլոր փաստաթղթերն առկա են ամբիոնում: Ամբիոնն ունի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ համալսարանի ռազմավարական ծրագրին համապատասխան, ունի դրանց իրականացման և հաշվետվողականության մեխանիզմներ, սակայն պլանավորման և

պլանների իրականացման արդյունավետության վերլուծություն, մշտադիտարկում չի իրականացրել:

3. Ուսումնական գործընթաց և որակի ապահովում չափանիշում՝

- Վերջին 3 տարիների ընթացքում բաց դասեր չեն անցկացվել:
- Դասալսումներ հիմնականում անցկացվել են ամբիոնի վարիչի կողմից, սակայն ուսումնառության արդյունքների և դրանց համապատասխան դասավանդման և ուսունառության մոտեցումների ու մեթոդների վերաբերյալ ուսումնասիրություններն ու քննարկումները դեռևս համակարգված չեն:

4.Գիտահետազոտական աշխատանքներ չափանիշի ապահովման շուրջ իրականացվել են որոշ աշխատանքներ: 2020-2021 ուստարում ՊԴ կազմը մասնակցել է հանրապետական և միջազգային կոնֆերանսների, անցել վերապատրաստումներ արտերկրում և հանրապետությունում, տպագրել է գիտական հոդվածներ, թեզիսներ տարբեր ամսագրերում և ժողովածուներում, սակայն այդ աշխատանքների քանակը զգալիորեն զիջում է նախորդ տարիների թվերին, որի պատճառը աշխարհում տիրող համավարակի անբարենպաստ պայմաններն են եղել:

Ամբիոնի գործառույթը ուսումնական գիտական ընկերության հետ տարվող աշխատանքներում ուշադրության կարիք ունի:

5. Մեթոդական և հասարակական աշխատանքներ չափանիշի պահանջներից՝ դասավանդվող առարկաների դասախոսությունների ֆոնդի առկայությունն է և հասանելիությունը ուսանողներին, այն ամբիոնի վարիչի հետևողական ջանքերի շնորհիվ համալրվում է: Ամբիոնի աշխատակիցների կողմից տրված կարծիքներ, գրախոսություններ չեն եղել: Դասախոսներն ընդգրկված չեն տարբեր հասարակական կազմակերպություններում առայժմ:

Ամբիոնի կողմից բարձրացված խնդիր՝

1. Ամբիոնի նյութատեխնիկական բազայի համալրում:
2. Գործնական և լաբորատոր դասերի գնահատման ձևաթերթի բովանդակությունը վերանայել, քանի որ այն հնարավորություն չի տալիս լիարժեք գնահատում իրականացնել:
3. Հետազոտական աշխատանքներում ուսանողների ընդգրկվածության գործառույթը դարձնել առաջնահերթություն:

Հանձնաժողովն առաջարկում է՝

1. Ակտիվացնել ամբիոնի գիտահետազոտական, ուսումնամեթոդական գործունեությունը:
2. 2022-2023 ուստարվա ընթացքում կազմակերպել առնվազն 2 բաց դաս:
3. Գործող պայմանագրերի շրջանակներում կազմակերպել համատեղ միջոցառումներ:

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

/ամբիոնի վարիչ՝ Հ. Հակոբյան/

1.Ամբիոնի կազմը

	Ուստարի	Դասախոսների թիվը	Ուսումնաօժանդակ կազմ	Գիտ. աստիճան	Գիտ. կոչում	Միջին տարիքը
1.	2019-2020	13	-	3	--	40
2.	2020-2021	9	-	2	-	39
3.	2021-2022	9	-	1	-	36

2. Ամբիոնի կառավարում չափանիշում պահանջվող փաստաթղթերն առկա են ամբիոնում:

3. Ուսումնական գործընթաց և որակի ապահովում չափանիշում՝

- Վերջին 3 տարիների ընթացքում բաց դասեր չեն անցկացվել:
- Դասալսումների ուսումնական բեռնվածության շեղումը վերաբերում է միայն ոչ աշխատանքային օրերին:
- Վերջին 3 տարիների ընթացքում բաց դասեր չեն անցկացվել:
- Դասալսումներ հիմնականում անցկացվել են ամբիոնի վարիչի կողմից, սակայն ուսումնառության արդյունքների և դրանց համապատասխան դասավանդման և ուսում-նառության մոտեցումների, մեթոդների վերաբերյալ ուսումնասիրություններ ու քննարկումներ դեռևս չեն իրականացվել:

4. Գիտահետազոտական աշխատանքներ չափանիշում

- Գիտահետազոտական աշխատանքների հետ կապված նյութեր չկան:
- ԳԲՈՒԿ-ում հիվանդների բավականաչափ հոսքի հետ մեկտեղ տվյալների վերլուծություն ուսանողների կողմից և դրանց ներկայացում գիտական հրապարակումների տեսքով չի կատարվում:

5. **Մեթոդական և հասարակական աշխատանքներ չափանիշում** չի ներկայացվում կրթական ծրագրի իրականացումն ապահովող անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով համալրումը, թարմացումը:

Ամբիոնի կողմից բարձրացված խնդիր՝

1. Ամբիոնի նյութատեխնիկական բազայի համալրում:

Հանձնաժողովն առաջարկում է՝

1. Խթանել ամբիոնի աշխատակիցների գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիան:

2. Մշակել համալսարանում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման հստակ մեխանիզմներ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

/ամբիոնի վարիչ՝ Տ.Կարապետյան/

1. Ամբիոնի կազմը

	Ուս տարի	Դասախոսների թիվը	Ուսումնաօժանդակ կազմ	Գիտ. աստիճան	Գիտ. կոչում	Միջին տարիքը
1.	2019-2020	8	1	2	1	47
2.	2020-2021	8	-			
3.	2021-2022	8	-	3	1	50

2. **Ամբիոնի կառավարում չափանիշում** պահանջվող փաստաթղթերն առկա են ամբիոնում: Ամբիոնի կառավարումն իրականացվում է ամբիոնի կանոնադրության և ամբիոնների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հիման վրա:

- Վերանայված և ԳԽ-ով հաստատված կանոնակարգերի մասին իրազեկումը ամբիոնի աշխատակիցներին, ներքին տեղեկացվածության մակարդակը ցածր է:

3. Ուսումնական գործընթաց և որակի ապահովում չափանիշում՝

- Գնահատման համակարգի կիրառումը որոշ խնդիրներ ունի. լեզվի իմացության գնահատումը չի գոհացնում դասախոսներին:
- Բաց դասեր վերջին մեկ տարում չեն արվել:
- Ուսանողներին տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ ամբիոնում ընդհանուր քննարկումներ չեն եղել:
- Դասալսումների գնահատման ձևաչափի հետ կապված դասախոսները որոշ խնդիրներ են տեսնում, որոնց մասին պատրաստվում են առաջարկություններ ներկայացնել:

4. Գիտահետազոտական աշխատանքներ չափանիշում

- Գիտահետազոտական աշխատանքների հետ կապված նյութեր չկան:
- Համալսարանի դասախոսներն ընդգրկված են գիտահետազոտական աշխատանք-ներում, սակայն ոչ մեր համալսարանի:
- ՈւԳԸ-ի հետ կոնկրետ աշխատանքներ չեն արվում:

5. Մեթոդական և հասարակական աշխատանքներ չափանիշում

- Ամբիոնը ակտիվ է մշակութային միջոցառումների կազմակերպման հարցերում:

Ամբիոնն առաջարկում է՝

1. Կրթության որակի բարձրացման նպատակով քննարկել խորհրդատվությունների տրամադրման, գիտելիքի գնահատման համակարգը:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

/ամբիոնի վարիչ՝ Է.Մինասյան/

1.Ամբիոնի կազմը

	Ուս. տարի	Դասախոսների թիվը	Ուսումնաօժանդակ կազմ	Գիտ. աստիճան	Գիտ. կոչում	Միջին տարիքը
1.	2019-2020	7	1	3	2	51
2.	2020-2021	8	1	3	2	50
3.	2021-2022	9	1	3	2	50

Վերջին ուստարում ամբիոնի կազմում ընդգրկված դասախոսներից համալսարանում դասավանդել են 4-ը, մյուս դասախոսները, որոնք այսօր էլ աշխատում են ԱԲՀ-ի ԳԲՈՒԿ-ում՝ որպես պրակտիկ բժիշկ, ուսումնական պլաններում ընդգրկված ավանդական բժշկության կրթամասի առարկաների թվի, ժամերի կրճատման հետ կապված մնացել են որպես խորհրդատու և պահուստային դասախոսներ:

Հիշեցնենք, որ օտարերկրյա ուսանողների խնդրանքով վերանայված ուսումնական պլաններից հանվել են ամբիոնի մի շարք առարկաներ (նախորդ ուսումնական պլանում ներառված Ավանդական բժշկության կրթաբլոկին հատկացված կրեդիտները Հնդկաստանում և մի շարք այլ երկրներում հաշվի չեն առնվում, և որը մեր շրջանավարտների համար որոշակի խնդիրներ է առաջ բերում):

2. Ամբիոնի կառավարում չափանիշում պահանջվող փաստաթղթերն առկա են ամբիոնում:

- Վերանայված և ԳԽ-ով հաստատված կանոնակարգերի մասին իրազեկում ամբիոնի աշխատակիցներին հանդիպումների կամ ամբիոնի նիստերի ժամանակ չի եղել:

3. Ուսումնական գործընթաց և որակի ապահովում չափանիշում՝

- Բաց դասեր չեն իրականացվել դիտարկվող ժամանակահատվածում:
- Ուսանողներին տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ ամբիոնում ընդհանուր քննարկումներ չեն եղել:

4.Գիտահետազոտական աշխատանքներ չափանիշում

- Գիտահետազոտական աշխատանքների հետ կապված նյութեր չկան:
- Համալսարանի դասախոսներն ընդգրկված են գիտահետազոտական աշխատանք-ներում, սակայն ոչ մեր համալսարանի:
- ՈՒԳԸ-ի հետ կոնկրետ աշխատանքներ չեն արվում:

- ԳԲՈՒԿ-ում հիվանդների բավականաչափ հոսքի հետ մեկտեղ տվյալների վերլուծություն ուսանողների կողմից և դրանց ներկայացում գիտական հրապարակումների տեսքով չի կատարվում:
- Միայն ամբիոնի վարիչն է գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված և այժմ «Դասախոսությունների ժողովածու» ուսումնական ձեռնարկը գտնվում է խմբագրման վերջին փուլում:

5. Մեթոդական և հասարակական աշխատանքներ չափանիշի պահանջներից՝ դասավանդվող առարկաների դասախոսությունների ֆոնդը համալրման և անգլերենով ներկայացման կարիք ունի: Ամբիոնի աշխատակիցների կողմից տրված կարծիքներ, գրախոսություններ չեն եղել: Դասախոսներն ընդգրկված չեն տարբեր հասարակական կազմակերպություններում առայժմ:

Ամբիոնն առաջարկում է՝

1. Կրթության որակի բարձրացման նպատակով քննարկել ուսպլանով նախատեսված ուսանողներին դասավանդվող առարկայի շրջանակում խորհրդատվությունների տրամադրման և կատարողականների վերահսկման հարցը:

Հանձնաժողովն առաջարկում է՝

1. Ուշադրություն դարձնել հետազոտական աշխատանքների կատարմանը ամբիոնում, դասախոսների ու հատկապես ուսանողների ներգրավվածությունն ապահովել հատկապես հետազոտական աշխատանքներում:
2. Համալրել ամբիոնի կազմը ավանդական կրթամասում ընդգրկված առարկաների անգլերենով դասավանդման համար:
3. Լրացնել անգլերենով մասնագիտական գրականության պակասը՝ հաշվի առնելով օտարալեզու ուսանողներին դասավանդելու համալսարանի քաղաքականությանը:
4. ԳԲՈՒԿ-ում առկա հիվանդների տվյալները, կլինիկական դեպքերը ուսումնասիրել և օգտագործել հետազոտությունների կատարման նպատակով: Ուսանողների կողմից կլինիկական դեպքերի առավել շատ ուսումնասիրությունը որպես անհատական աշխատանքներ կնպաստի նրանց վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերոնշյալ ամբիոնների մշտադիտարկման արդյունքները՝ հանձնաժողովի կողմից վերհանվել են որոշ խնդիրներ, ներկայացվել առաջարկություններ: Խնդիրները, ըստ չափանիշների, հետևյալն են՝

1. Ամբիոնի կազմը

Համալսարանի 8 ամբիոններից 6-ում իրականացրած մոնտորինգը ևս մեկ անգամ փաստեց այն, որ անգլալեզու ՄԿԾ-ների իրականացման համար ամբիոնները համալրված

են անգլերենին տիրապետող, կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով: Իրականացվել են դասախոսների ընտրության հստակ մոտեցումներ: Դասախոսական կազմն ապահովված է գիտությունների թեկնածուներով: Կան ամբիոններ, որոնք ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցներ չունեն, ինչն էլ հրատապ լուծում է պահանջում:

2. **Ամբիոնի կառավարում**

Ամբիոնների գործունեությունը և տարբեր գործընթացները կարգավորող փաստաթղթերը հիմնականում հասանելի են առցանց, ինչպես նաև առկա են ամբիոնում՝ թղթային տարբերակով: Նյութական ռեսուրսները տրամադրվում են ըստ ամբիոնի վարիչի պահանջագրերի և բյուջեի հնարավորությունների:

Ամբիոնի վարիչն անմիջականորեն, ամբիոնի աշխատակիցները հիմնականում միջնորդավորված ձևով հնարավորություն են ստանում մասնակցելու համալսարանի կառավարման գործընթացին, հարցերի քննարկմանն ու դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը:

3. **Ուսումնական գործընթաց և որակի ապահովում**

Ընդհանուր առմամբ, ԱԲՀ-ն ապահովված է տվյալ պահին անհրաժեշտ ռեսուրսներով՝ ուղղված կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը: Ամբիոնների նիստերում քննարկվել են յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի արդյունքները, ընթացիկ ստուգումների արդյունքները, առարկայական ծրագրերը, ուսանողական հարցումների արդյունքները, սակայն սակավաթիվ հանդիպումներ, քննարկումներ են եղել ուղղված կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասավանդման նյութերով և ռեսուրսներով ապահովվածությանը, ուսանողների համար խորհրդատվական պարապմունքների իրականացմանը, ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հարկ եղած դեպքում ամբիոնների հետ քննարկվել են ուսանողների կողմից վերհանված խնդիրները և տրվել համապատասխան լուծումներ: Դասախոսների մասնագիտական և մեթոդական որակների գնահատման համար ամբիոնի վարիչների և այլ դասախոսների կողմից իրականացվում են դասալսումներ, որոնք նպաստում են առաջացած խնդիրների դուրսբերմանը:

4. Գիտահետազոտական աշխատանքներ

Ընդհանուր առմամբ ամբիոններում առկա է գիտահետազոտական աշխատանքների ակնհայտ պասիվություն, որն ինչ-որ չափով փոխվել է վերջին տարում՝ Գիտական մասի վարիչի գործուն քայլերով պայմանավորված: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հետա-զոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները դարձնել առաջնահերթ:

Նշենք, որ ամբիոնները չունեն մշակված ու հստակեցված հետազոտական ուղղություններ:

5. Մեթոդական և հասարակական աշխատանքներ: Ամբիոններն ունեն դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, որոնք համապատասխանում են նկարագրված մասնագիտական ելքային արդյունքներին: Մեծամասամբ ամբիոնների աշխատակիցները ուսումնամեթոդական հրապարակումների հարցում մեծ պասիվություն են ցուցաբերում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ամբիոնների տարեկան հաշվետվությունը՝ հիմնված ռազմավարական ծրագրի, ամբիոնի աշխատանքային պլանի վրա՝ որպես ամբիոնի՝ տվյալ ուսումնական տարում փաստացի կատարած աշխատանքների ներկայացում, պետք է ունենա վերլուծական բնույթ և լինի ինքնագնահատում:
2. Հաշվետվությունների պարզությունն ու սեղմությունը հարկավոր է արտահայտել գրաֆիկների ու գծապատկերների միջոցով:
3. Հաշվետվությունը կազմելիս հարկավոր է ղեկավարվել ԱԲՀ-ի ռեկտորի հրամաններով, գիտական խորհրդի, ռեկտորատի և ամբիոնի որոշումներով, ինչպես նաև ներկայացնել ամբիոնում կատարված աշխատանքների և միջոցառումների շրջանակը և առաջարկու-թյուններ՝ ուղղված դրանց բարելավմանը:
4. Իրականացնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումներ: Համալսարանի գիտական ներուժն ամբողջությամբ օգտագործել գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության համար:
5. Կրթության որակի բարձրացման նպատակով քննարկել ուսպլանով նախատեսված առարկայի շրջանակում ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների տրամադրման և կատարողականների վերահսկման հարցը:
6. Իրականացնել ավանդական բժշկության վերաբերյալ վերապատրաստումներ, որոնք կնպաստեն կուտակած փորձի փոխանցմանը հասարակության լայն շերտերին:
7. Իրականացնել դասախոսական կազմի գնահատումներ և արդյունքում դուրս բերված խնդիրների հիման վրա՝ անհրաժեշտ հետևություններ:
8. Համալրել ամբիոնների նյութատեխնիկական բազան՝ ըստ անհրաժեշտության: